13.03.26 - 13.03.26
14:30
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան, 5-րդ հարկ, 503 ընթերցասրահ

Ս.թ. մարտի 13-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի 503 ընթերցասրահում Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, Ամերիաբանկի ու «Armenian Code Academy»-ի համագործակցությամբ տեղի կունենա տեղեկատվական հանդիպում՝ նվիրված **«TechGen»** ծրագրին:

Ամերիաբանկի և «Armenian Code Academy»-ի գործակցությամբ իրականացվող «TechGen» ծրագիրը Հայաստանի «Fintech» ոլորտում այսօրինակ առաջին նախագիծն է, որը համադրում է որակյալ ուսուցումը և շուկայի առաջատար ֆինթեք միջավայրը: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ուսանողներին և շրջանավարտներին սկսելու իրենց կարիերան *Tech* ոլորտում՝ ուսուցման և գործնական փորձի համադրությամբ:

Հանդիպման ընթացքում մասնակիցները կիրազեկվեն *Tech* աշխատաշուկայում առկա հնարավորություններին, պահանջված հմտություններին, կարիերա կառուցելու հաջորդական քայլերին:

Գրանցման համար անցեք հետևյալ հղումով: Սիրով սպասում ենք Ձեզ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am